



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա Ի Ե Տ Ա Բ Ե Բ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԱԶԳԱՅԻՆՔ, ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՊՐՈՅԻ ԱՇԱԿԵՐՏԱՅ ՏՐՈՒԵԼՈՒ ՊԱՏԻՃՆԵՐԸ

սիոյ նախնական դպրոցներուն մէջ ուրիշ ինչ կարգադրութիւն ալ պակաս, պատիժներու կարգադրութիւնը կայ ու կայ: Ապտակ (շամար, սիլի), կսմիթ (շիւսիֆ), մազէ՝ ականջէ քաշել, գաւազանով խաշել, թաթով տղուն ափերն ուռեցընել, քանոնով ըզունկները տրորել, կռուփով (եռմուխով) գլուխը կռիւլ, կռնակը թմբել, աքացի մէջքին դարնել, եւ անուանի գելարանը (փախալան) իգործ դնել, եւ ասոնք ամէն ալ վայրենի աղաղակներով, յիշոցքներով, անէծքներով, անարգանքներով, եւ կատաղի բար-

կութեամբ հանդերձ բանեցընել, մինչեւ ցայժմ ծանօթ ու սարսափեցընող բաներ են նաեւ մեր գրեթէ ամենայն նախնական դպրոցներուն աշակերտացը, եւ վարժապետաց դահճութեանը սեպհական ու սովորական հրնարքներ:

Տարակոյս չկայ թէ ուր որ յանցանք կայ՝ պատիժ ալ պէտք է լինի, որպէս զի արգարութիւնը տեղն երթայ, եւ կարգն ու կանոնը չաւրուի. բայց թէ որ յանցանքին ինչ տեսակ պատիժ տալու է՝ որ արգարութեան չափը չանցնի, եւ բարեկարգութեան տեղ անկարգութիւն չտիրէ, այս է գիտելու բանը: Ասկից ալ աւելի գիտելիքը այն է թէ

ինչ տեսակ պատիժներ տալու է տղայոց որ իրենց պակասութիւններէն առաջուց ետ կենան ու կրթութիւն: Այս այսպէս լինելով, ասիական դպրոցներուն մէջ մինչեւ ցայժմ իգործ գրուած պատժողական ոճը յայտնապէս բարբարոսական, բռնաւորական, դաժնական, անկարգ, անխղճմտանք, անիրաւ ու վնասակար ոճ է: Եւրոպական ազգաց մէջ ալ հարիւր տարի մը առաջ նոյն պատիժները կգործածուին եղեր, բայց այժմ վաղուց վերացուեր են. տեսնեմք թէ երբ ու ինչ կերպով պիտի վերնան նաեւ մեր ազգին նախնական դպրոցներէն:

Կհրաւիրեմք մերազնեայ վարժապետներն ու դպրոցաց հոգաբարձուները որ այս օգտակար բանիս մէջ համարձակ հետեւին եւրոպական նորաձեւութեան ու ճշմարիտ լուսաւորութեան, մանաւանդ թէ մարդկութեան եւ քրիստոնէութեան՝ ըստ առաջիկայ կանոնադրութեանց:

Պատիժ ըսելով միայն ծեծ ու փետ պէտք չէ հասկընալ. պատիժ է այն ամենայն գործողութիւնն որ անով տղայք իրենց յանցանքը կրնան ճանչնալ, խոնարհիլ, ամբշնալ ըրածներուն վրայ, եւ խրատուիլ՝ որ մէյմ, ալ չընեն. անոր համար իրաւամբ ալ շատ լեզուաց մէջ պատիժ բառին տեղը *paenitentia* կամ ողորդութիւն բառերը կգործածուին: Տեսնեմք թէ այս տեսակ խրատներուն կամ պատիժներուն գլխաւորներն ու օգտակարները որոնք են:

Տղայոց տրուելու պատիժներուն մէջ մէկ հատը կայ որ ուրիշներէն աւելի հանգստութիւն տուող է վարժապետին, ուրիշներէն աւելի օգտակար է աշակերտին, եւ ուրիշներէն աւելի ընդունելի է նորա ծնողացը. եւ այս է *gravis sapientia* ըստաճը, գաղղիարէն *phronesis*:

Այս գրաւոր ապաշխարանքին ամենէն փոքրն է՝ թէ տող բան գրէ մը օրինակել տեսարակի մէջ՝ ուսման ժամանակէն դուրս, այսինքն կամ տունը եւ կամ ուրիշ աշակերտաց հանգչելու կամ խաղալու ատենը:

Աշակերտաց մէկուն պաշտօնը կլինի՝ վարժապետին ասոր անոր տուած գրաւոր ապաշխարանքները նշանակել տետրակի մը մէջ. երբոր աշակերտին մէկը յանցաւոր գտնուի, վարժապետը նշան կուտայ այն ազգարարին, եւ նա կգրէ աշակերտին անունն ու անոր տրուելու տողերուն համարները. ուսման ժամանակը վերջանալուն պէս՝ աղթքէն առաջ՝

ազգարարը ձայնով կկարդայ նշանակածները, եւ թէ իւրաքանչիւրը որ գրքին որ երեւէն պիտի օրինակէ: — Նոյն ազգարարին պարտքն է՝ յաջորդ գասաւութեան սկսելէն առաջ ստուգել թէ արգէն տրուած ապաշխարանքները կատարուեր են թէ ոչ: Ով որ խիստ գէշ կամ շատ սխալներով գրեր է՝ նորէն պիտի գրէ, եւ առաջինէն աւելին. եւ այս մինչեւ երեք անգամ. եւ թէ որ աշակերտը յամառութիւն ընէ, ուրիշ պատիժ կտրուի անոր:

Գիր չգիտցող աշակերտաց կարելի է բերնուց սերտելու քանի մը տող բան տալ՝ որ նոյնպէս ուսման ժամանակէն դուրս պիտի սովորին. միայն թէ նայելու է որ տղուն կարողութենէն վեր չլինի սովորելը:

Ըսինք թէ այս տեսակ ապաշխարանքը ուրիշ ամէն պատիժներէն ալ աւելի հանգիստ է վարժապետին համար, վասն զի ասով վարժապետը ազատ կմնայ կանչուելու տեղութենէն ու բարկութեան եւ կատաղութեան փոխանցներէն: Աւելի օգտակար է պատժուող աշակերտին, վասն զի անով թէ գիր եւ ուղղագրութիւն կսովորի, եւ թէ խաղով կամ չարութեամբ անցընելու ժամանակը աղէկ բանի կբանեցընէ: Ծնողաց ալ աւելի ընդունելի է, վասն զի կտեսնեն որ վարժապետը այս կերպով իրենց տղուն յանցանքէն ալ օգուտ քաղել կուտայ տղուն: Վասն զի թէ պէտ շատ ծնողք իրենց զաւակը դպրոց տրուած ատեննին համարձակ կըսեն վարժապետին թէ «Միտք քեզի, ոսկորն ու կաշին ինձի. ծեծէ, խաշէ, մարդ ըրէ». բայց ծնողական սէրը ինչպէս շուտով ոտք կենէ այն իրենց խօսքին ու խոստմանը գէժ՝ երբոր յանկարծ տղան լալով գոռալով տուն դառնայ ու վրանին ընկնի, գանգատելով որ վարժապետը զինքը ծեծեց, պատժեց, թեւը ցաւցուց, ոտքը խաշեց, ականջէն քաշեց, մազը փետեց. . . Իսկ այս գրաւոր ապաշխարանքը ծնողաց սրտին ալ անոյշ կուգայ, վասն զի մէջը ցաւ չկայ. ուստի վարժապետը կըրնայ համարձակ պահանջել խօսք հասկըցող ծնողքներէն որ իրենց տղուն ապաշխարանաց տետրակը նային ամէն իրիկուն, ու մինչեւ որ այն ապաշխարանքը չկատարէ՝ կերակուր չտան անոր:

Երկրորդ տեսակ անվնաս եւ օգտակար պատիժ տուգանքն է որ յանցաւոր տղոցմէ կառնուի՝ նոցա յանցանքին համեմատ: Այս տուգանքը կլծարեն անոնք որ վարձատրու-

Թեան համար ընդունած են գովութեան տուժանքներ: որոց վրայ յետոյ կ'իստիմք: Այս տուգանքը վճարելն ալ շատ զօրաւոր պատիժ է, մանաւանդ խելօք տղայոց:

Երրորդ տեսակ անվնաս՝ բայց վերջին աստիճանի ծանր պատիժն է՝ յանցաւորին անունը գալատան պատը կախուած սեւ տախտակին վրայ գրել այսքան օրուան համար, որ եկողները տեսնեն. եւ թէ որ շատ ծանր յանցանքի պատճառաւ է՝ եռամսեայ վկայականին մէջ ալ անցընել:

Թող չըսէ մէկը թէ արեւելցի տղայք եւրոպացւոց չեն նմանիր, ուստի այդպիսի բաները նոցա համար պատիժ չեն. նոցա կնյ մի ծեծ, կնյ մի գաւազան, կնյ մի փայտ, ան նայինք: — Այնպէս չէ. տղայն ամէն տեղ՝ ամէն ժամանակ տղայ է, եւ իրեն պատին ու անարդանքը, պարծանքն ու ամօթը շատ աղէկ կ'ձանձնայ. ուստի սրչափ ալ խստերախ կարծուի արեւելցի տղայն, եւրոպացիէն պակաս զգայուն չէ այն պատիժներուն՝ որ իրեն ամօթ ու նախատինք կ'ըներեն. բոլոր գեղաւորութիւնը այնպիսի վարժապետ գտնելն է՝ որ կամք եւ կարողութիւն ունենայ տղայոց օգտակար պատիժներ տալու, նոցա այն անմեղ հասակը կրթելու մտքով, եւ ոչ թէ իւր գաղանական բարկութիւնը կըշտացընելու ջանքով:

Կարելի է նաեւ քանի մը ուրիշ տեսակ պատիժներ բանեցընել որ նոյնպէս աւելի բարոյական խրատ կ'համարուին՝ քան թէ մարմնոյ չարչարանք. եւ թէ որ խոհեմութեամբ գործածուին, շատ օգուտ կ'ընեն տղայոց: Օրինակի համար, որոշուած ժամա-

նակէն ուշ դպրոց եկող տղան կարելի է չօքեցընել սահմանեալ տեղ մը այսքան ատեն, կամ մինչեւ որ անկից աւելի ուշ եկող մը հասնի, ունա բռնէ տեղը: — Դասաւորութեան ժամանակ մտադրութիւն չընող տղայն կարելի է առաջին անգամուն ոտքի վրայ կեցընել քիչ մը ատեն. երկրորդին չօքեցընել, երրորդին գրաւոր ապաշխարանք դրնել: Դասը չգիտցող տղայէն կարելի է պահանջել որ երկրորդ օրը ոչ միայն ջրի պէս գիտնայ, այլ եւ տունը թղթի վրայ օրինակէ զայն ու բերէ:

Ասոնք եւ սոցա նման պատիժներ տալու ատեն՝ վարժապետը պիտի չմոռանայ որ ամէն տղայ մէկ բնութեան տէր չէ, ուստի եւ մէկ տեսակ պատժով պիտի չպատժուի, թէպէտ եւ նոյն յանցանքը գործած լինի:

Ընդհանրապէս զգուշանալու է պատժելէն վախկոտ ու վատառողջ տղայքը. այնպիսիներուն արդէն բաւական խրատ է ուրիշներուն պատժուածը տեսնելը: — Նոյնպէս պէտք չէ ծանր պատիժներ տալ այն տղայոց որ ստատիկ կրակոտ ու թեթեւ են բնութեամբ, եւ նոցա որ գեռ նոր սկսեր են դպրատուն գալ. այսպիսիները աւելի կշահուին խրատով կամ թեթեւ յանդիմանութեամբ մը: — Իսկ այն տղան որ յամառ ու կամակոր, ծածկագործ ու ստախօս, չար ու կեղծաւոր, կռուասէր ու ամբաստանող, ծոյլ ու չար օրինակ տուող են, պէտք է անպատճառ խրատել ու պատժել, մինչեւ որ իրենք զիրենք ժողովրտեն:

Ուրիշ յօգուածով մը կ'իստիմք տղայոց ընելու վարձատրութեանց վրայ:

Ա Ռ Ա Կ

Ա Ղ Ո Ւ Է Ս Ե Ւ Կ Ո Ւ Զ. (a)

«Աղուէս տղեար, սէր բարով: սէր կըվազես բարեկամ,
Ինչ ունիս որ մեր երեսն ալ չես նայիր այս անգամ»

Հարցուց կուզը աղուխաւն: —

«Ա՛հ բարեկամ սիրասուն,

Ըսաւ աղուէսը կուզին.

Մի հարցընէր բընաւին.